«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
գիտական գծով պրոռեկտոր, փիլ.գիտ.դոկտ.,
պրոֆեսոր
Պ.Ս. Ավետիսյան

_____ «16» դեկտեմբերի 2024 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Առաջատար կազմակերպության

ԿԱՐԾԻՔ

Խաչատրյանի Մերի Կարենի՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև » թեմայով՝

ԺԲ.00.04 – դատական իրավունք (դատարանակազմություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ, իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ Գիտական աստիճանների շնորհման կարգի 24–րդ կետի համաձայն, 03.12.2024 -ին առաջատար կազմակերպության է ներկայացվել ՀՀ ԲՈԿ-ի ԵՊՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդում 26.12.2024-ին պաշտպանության նշանակված (ԺԲ.00.04 - դատական իրավունք մասնագիտությամբ), Մերի Կարենի Խաչատրյանի՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև» թեմայով գիտությունների

թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսությունը՝ վերջինս գնահատելու, արդյունքների նշանակությունը գիտության և արտադրության ոլորտներում նշելու, հանձնարարականներ տալու՝ դրանք օգտագործելու համար:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում ձևավորված գիտական գաղափարների մասնագիտական որակների և տեսագործնական կիրառման հնարավորությունների վերաբերյալ եզրահանգումներ կատարելու համար, անհրաժեշտ է անդրադառնալ ուսումնասիրության արդիականությանը, վերջինս պայմանավորող ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին, պաշտպանությանը ներկայացված առաջարկների նորույթին, եզրակացություններին:

Գիտական հետազոտության բովանդակության, արդիականության և գիտական նորույթի մասին:

Ատենախոսությունը կազմում է 184 էջ՝ (առանց օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկի), բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, 9 պարագրաֆներից, եզրակացությունից և իրենից ներկայացնում է դատական իրավունքի ոլորտում ծավալուն, արդիական, համապարփակ, տրամաբանական և սիստեմավորված կառուցվածք ունեցող գիտական աշխատություն, որը բազմակողմանի իրավական վերլուծություն է տալիս քաղաքացիական դատավարությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մասին՝ վերջինիս վերաբերյալ ընդունված օրենքի դրույթների սահմաններում, ինչը վկայում է գիտական աշխատության նորույթի մասին:

Գիտական ուսումնասիրման համար հեղինակի կողմից օգտագործվել են հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականություն, ներպետական և միջազգային իրավական ակտեր, ներպետական և միջազգային դատական նախադեպեր և դատական պրակտիկան:

Ատենախոսության բովանդակությունը պայմանավորում են հետազոտության ներածության մեջ նշված նպատակը և խնդիրները, որոնք տեսականորեն ճիշտ են առաջադրված: Այդ մասին են վկայում ատենախոսության գլուխներում շարադրված և

ուսումնասիրության առարկա դարձած գիտակիրառական նշանակության գաղափարները:

Ատենախոսությունն ունի տրամաբանված և հետաքրքիր շարադրանք:

Առաջին գլխում ներկայացվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընդհանուր բնութագիրը, մասնավորապես, վերլուծված են տարբեր եկրներում վարույթի առնչությամբ միջազգային պրակտիկայում գործող մոդելների տեսակները, նպատակ ունենալով լուսաբանել միջազգային օրենսդրության և պրակտիկայում օգտագործվող մոդելների արդունավետությունն ու առանձնահատկությունները՝ ՀՀ օրենսդրի մոտեցումների և դատական պրակտիկայի հետ համադրման համար, որից հետո ատենախոսն անդրադարձել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարությում հայցի դռսևորման առանձնահատկություններին և հայցի տարրերին:

Գիտական աշխատության երկրորդ գլուխում լուսաբանված է ապօրինի գույքի բռնագանձման հայցի իրավունքի ծագման նախադրյալներիը և հայցի հարուցման հիմքերը, դրանց ուսումնասիրությանը, ապօրինի գույքի բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկությունները:

Վերջին երրորդ գլուխում ուսումնասիրված է ապօրինի գույքի բռնագանձման հայցի քննությունը քաղաքացիական դատավարությունում, դրան վերաբերող դատավարական փուլերում իրականացվող դատավարական գործողություններն ու նրանց առանձնահատկությունները:

Ատենախոսության նորույթն արտահայտված է պաշտպանությանը ներկայացված ութ դրույթներում, որոնք մանրամասնվում և վերլուծվում են նաև եզրակացության մեջ: Բացի դրանից, եզրակացությունը պարունակում է ատենախոսությանը վերաբերող հիմնական և գիտության զարգացման համար առավել հետաքրքիր գաղափարները և եզրահանգումները:

Անհերքելի է, որ աշխատությունն ունի իր ուրույն տեղը՝ տվյալ ոլորտում եղած գիտական աշխատությունների, դատական պրակտիկայում և իրավաստեղծ

ոլորտում գործող օրենքի դրույթների կատարելագործման, ինչպես նաև տեսական եզրահանգումների կատարելու համար:

Ատենախոսության գիտական արդյունքների մասին:

Ատենախոսի կողմից հրատարակվել է թեմային վերաբերող յոթ գիտական հոդված, որոնք արտահայտում են թեկնածուական ատենախոսության մեջ շարադրված դրույթները:

Ատենախոսության սեղմագիրը, որը ևս ներկացավել է ատենախոսության հետ, հակիրճ արտահայտում է հիմնական գիտական աշխատության մեջ շարադրված գաղափարները:

Մասնագիտական դիտողություններ և հանձնարարականներ պաշտպանությանը ներկայացված առաջարկների վերաբերյալ:

1 Ատենախոսության մեջ նորույթ արտահայտող պաշտպանությանը ներկայացված գրեթե բոլոր առաջարկները կրում են տեսական բնույթ, մինչդեռ դրանցում կան տեսականորեն արտահայտված արժեքավոր գաղափարներ, որոնք կարելի էր ներկայացնել նաև օրենսդրական լուծումների տեսքով՝ ավելի համոզիչ դարձնելով աշխատության գործնական նշանակությունը: Սակայն հեղինակը թողնում է այդ գործընթացն իր հետնորդներին, որը ճիշտ չէ (Ատենախոսություն, էջ, 16):

2. Ապօրինի գույքի բռնագանձման վարույթը, որը ատենախոսը համարում է որպես տարբերակված վարույթ և գտնում, որ այն չի կարող համարվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված վարույթի տեսակներից (Ատենախոսություն, էջ, 11) մասամբ ճիշտ չէ, քանի որ վերը նշված վարույթը հարուցվում է հայց ներկայացնելու միջոցով, հետևաբար այն, հաշվի առնելով հարուցման նախադրյալները և քննության ընթացակարգի առանձնահատկությունները, հանրային կարևոր նշանակությունը, պետք է համարել հատուկ հայցային վարույթի քաղգործի տեսակ և դիտարկել վարույթի տեսակների սահմաններում: Այն տարբերակված վարույթ կարելի է համարել, սակայն հատուկ

հայցային վարույթի սահմաններում: Ցանկացած քաղաքացիական գործ, անկախ նրա բնույթից և առանձնահատկություններից, դատարանում հարուցվելու դեպքում՝ պետք է դիտարկվի որպես որևէ վարույթի տեսակ և այդ սահմաններից դուրս չի կարող քննության առարկա դառնալ:

Եզրակացություն:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան առաջատար կազմակերպությունը հաշվի առնելով վերը շարադրվածը, գտնում է, որ Մերի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Կառավարության թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգ» -ի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.04 - դատական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին, կատարված գիտական ուսումնասիրության արդիականության, իրավագիտության տվյալ բնագավառում նշանակության ու կարևորության աստիճանի, պաշտպանությանը դրված գիտական առաջարկությունների մասնագիտական որակի և ինքնուրույնության հիմքով:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր — Ա. Հ. Դավթյան

Հայ-Ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ իրավ.գիտ.թեկ. — Կ.Հ. Սարդարյան

Նիստերի քարտուղար — Կ. Գոնչար

Հայ-Ռուսական համալսարանի գիտական քարտուղար — Ռ.Ս.Կասաբաբովա